

Հաստատված է  
ՀԱԱՀ Ուսանողական խորհրդի  
Ընդհանուր ժողովում  
„\_\_\_„ \_\_\_ 2021թ. (արձանագրություն №9)

վավերացնում եմ  
ՌԽ նախագահ՝ Թոռնիկ Ալիյան  
„\_\_\_„ \_\_\_ 2021թ.

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

### **1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1.1.** Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (ՀԱԱՀ) Ուսանողական խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) ուսանողների ինքնակառավարման, ներկայացուցչական, ընտրովի բարձրագույն մարմին է:
- 1.2.** Խորհուրդը իր գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ օրենսդրությամբ, ՀԱԱՀ կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:
- 1.3.** Խորհրդի կողմից իրականացվող աշխատանքներին և ծրագրերին կարող են մասնակցել ինչպես ՀԱԱՀ, այնպես էլ ուսումնակրթական այլ հաստատությունների ուսանողները:
- 1.4.** Խորհրդի կանոնադրությունը և դրանում կատարվող փոփոխություններն ու լրացումները ընդունվում են ընդհանուր ժողովի կողմից:
- 1.5.** Խորհուրդը, ելնելով իր նպատակներից և խնդիրներից, կարող է ինքնուրույն կապեր հաստատել ՀՀ և արտերկրի հասարակական, ուսումնակրթական և այլ կազմակերպությունների հետ:
- 1.6.** Խորհրդի հարաբերությունները ՀԱԱՀ ղեկավար մարմինների հետ կարգավորում են ՀՀ օրենսդրությամբ, ՀԱԱՀ կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ և ՀԱԱՀ ռեկտորատի, գիտական խորհրդի և հոգաբարձուների խորհրդի համապատասխան որոշումներով:
- 1.7.** Խորհուրդն իր խնդիրների լուծման համար համագործակցում է ՀԱԱՀ ամբիոնների, արհմիության, Ուսանողական գիտական ընկերության և այլ ստորաբաժանումների հետ:

**1.8.** Խորհրդի անվանումն է հայերեն՝ ՀԱԱՀ Ուսանողական խորհուրդ, ռուսերեն՝ НАУА Студентческий Совет, անգլերեն՝ ANAU Student Council, կարճ անվանումն, հայերեն՝ ՀԱԱՀ ՈւԽ, ռուսերեն՝ НАУА СС, անգլերեն՝ ANAU SC:

## **2. ԽՈՐՀՐԴԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

**2.1** Խորհուրդն արտահայտում և պաշտպանում է ուսանողների իրավունքները, սոցիալական շահերը, նպաստում ուսումնակրթական հիմնախնդիրների լուծմանը, ուսանողական ինքնակառավարման զարգացմանը, ուսանողության հոգևոր զարգացմանը, ազատ ժամանցի, հանգստի, մշակութային և մարզական կյանքի կազմակերպմանը:

## **3. ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

**3.1** Խորհրդի բարձրագույն մարմինը ուսանողների ներկայացուցիչների ընդհանուր ժողովն (այսուհետև՝ Ժողով) է, որը հրավիրվում է առնվազն երկու տարին մեկ անգամ: Ժողովը ձևավորվում է ներկայացուցչական սկզբունքով՝ ցերեկային ուսուցման 20 ուսանողներից ընտրվում է մեկ պատվիրակ, հեռակա ուսուցման 300 ուսանողներից մեկ պատվիրակ:

### **3.2 Ժողովը՝**

ա) ընդունում է Խորհրդի կանոնադրությունը, կատարում է փոփոխություններ և լրացումներ,

բ) լսում, քննարկում և հաստատում է Խորհրդի նախագահի (այսուհետև նախագահ) հաշվետվությունը,

գ) քվեարկությամբ ընտրում է Խորհրդի նախագահություն (այսուհետև նախագահություն):

Ժողովն իրավասու է որոշումներ ընդունելու, եթե ներկա են պատվիրակների առնվազն 2/3-ը: Սույն կետի <ա> ենթակետով սահմանված հարցերի քննարկման ժամանակ որոշումներն ընդունվում են ժողովին մասնակից պատվիրակների ընդհանուր թվի 2/3-ով, իսկ մնացած դեպքերում՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Արտահերթ ժողով կարող է հրավիրվել Խորհրդի նախագահի կամ Խորհրդի նախագահության պահանջով:

**3.3** Նախագահության կազմը և կառուցվածքը սահմանում է ուսանողների ընդհանուր ժողովը:

### **3.4 Նախագահությունը՝**

ա) նախապատրաստում և հրավիրում է Խորհրդի ժողովները, նիստերը, հետամուտ լինում ընդունված որոշումների կենսագործմանը, քննարկում ընթացիկ հարցեր,

բ) մշակում է Խորհրդի ընթացիկ և հեռանկարային ծրագրերը, հաստատում և համակարգում է կուրսերի, ֆակուլտետների և հանրակացարանի ուսանողական խորհուրդների, ծրագրերն ու աշխատանքները,

գ) առաջարկություններ է ներկայացնում կանոնադրությունը լրացնելու, փոփոխելու համար,

դ) առաջարկում է թեկնածուներ ՀԱԱՀ ստորաբաժանումների և կառույցների կազմում ընդգրկելու համար,

ե) ամփոփում և վերլուծում է ուսանողների ընթացիկ առաջադիմության, ուսումնական կարգապահության վիճակը,

զ) լավագույն ուսանողներին ներկայացնում է խրախուսման, առաջարկում է անվանական կրթաթոշակների թեկնածուներ:

**3.5 Նախագահությունը ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ 2 տարի ժամանակով ընտրում է Խորհրդի նախագահ, նախագահի տեղակալ (տեղակալներ) և քարտուղար:**

**3.6 Նախագահության նիստերը իրավագոր են, եթե մասնակցում են Նախագահության անդամների առնվազն 2/3-ը: Նախագահության նիստերը կարող են հրավիրվել նաև Նախագահության անդամների 1/3-ի պահանջով:**

### **3.7 Խորհրդի նախագահը՝**

ա) համալսարանի ռեկտորատի և գիտական խորհրդի անդամ է,

բ) ղեկավարում է խորհրդի աշխատանքները,

գ) համակարգում է ֆակուլտետային Ուսանողական խորհուրդների աշխատանքները,

դ) ներկայացնում է ՀԱԱՀ Ուսանողական խորհուրդը:

**3.11 Տեղակալ (տեղակալները) կատարում են նախագահի հանձնարարականները: Նախագահի բացակայության դեպքում նախագահի հանձնարարությամբ, նախագահի տեղակալներից մեկը համակարգում է Խորհրդի բոլոր աշխատանքները:**

3.12 Քարտուղարը համակարգում է քարտուղարության աշխատանքը: Քարտուղարի բացակայության դեպքում քարտուղարության աշխատանքները համակարգում է Խորհրդի նախագահը:

3.13 Սույն կանոնակարգով չնախատեսված և դրանում չընդգրկված այլ հարցերը կանոնակարգվում են ՀԱԱՀ կառնադրությամբ և Խորհրդի որոշումներով:

#### **4. ՖԱԿՈՒԼՏԵՏԱՅԻՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ**

4.1 Ֆակուլտետային Խորհուրդը մշակում է ծրագրեր, որոնք ուղղված են խորհրդի կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացմանը:

4.2 Ֆակուլտետի Խորհրդը ընտրում է ֆակուլտետի Խորհրդի նախագահ, նախագահի տեղակալ (տեղակալներ) և քարտուղար:

4.3 Ֆակուլտետի Խորհրդի նախագահության նիստերը հրավիրվում են առնվազն ամիսը երկու անգամ, իսկ արտահերթ նիստերի դեպքում խորհրդի անդամների 1/3-ի պահանջով կամ նախագահի պահանջով:

4.4 Նիստն օրինական է, իսկ որոշումներն ընդունվում են, եթե նիստին ներկա են անդամների առնվազն 2/3-ը:

#### **5. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ**

5.1 Մասնաճյուղի Խորհուրդը մշակում է ծրագրեր, որոնք ուղղված են Մասնաճյուղի խորհրդի կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացմանը:

5.2 Մասնաճյուղի Խորհուրդը ընտրում է Մասնաճյուղի Խորհրդի նախագահ, նախագահի տեղակալներ և քարտուղար:

5.3 Մասնաճյուղի Խորհրդի նախագահության նիստերը հրավիրվում են առնվազն ամիսը երկու անգամ, իսկ արտահերթ նիստերի դեպքում Մասնաճյուղի խորհրդի անդամների 1/3-ի պահանջով կամ նախագահի պահանջով:

5.4 Նիստն օրինական է, իսկ որոշումներն ընդունվում են, եթե նիստին ներկա են անդամների առնվազն 2/3-ը:

#### **6. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

6.1 Խորհուրդը իր գործունեությունը դադարեցնում է ընդհանուր ժողովի

6.2 Խորհրդի լուծարումից հետո նրա ամբողջ գույքը և այլ միջոցները պատկանում են ՀԱԱՀ-ին:

մասնակիցների առնվազն 2/3-ի որոշմամբ: